Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 23 մարտի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց»

(Ժամագիրք):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայրենիս եւ ի Սփիւռս,

Հոգու խնդութեամբ ողջունում ենք ձեզ Քրիստոսի հրաշափառ Յարութեան աւետիսով:

Բարձրեալի հետ ապրեցինք Մեծ Պահքի աղօթական, խորհրդաշատ օրերը, ապրեցինք խնդրամատոյց հայցով, մեր հոգու յոյզերով, նաեւ՝ տագնապով ու ցաւով, որ բերեցին մարտի 1-ի ողբերգական իրադարձութիւնները: Աւագ Շաբաթուայ խորհրդով հաղորդուեցինք մեր Տիրոջ երկրային կեանքի վերջին օրերի փրկչական տնօրինութիւններին:

Ցրուել էին Նրա աշակերտներն ու հետեւորդները տարակուսած ու վշտահար, երբ խաչուել էր Վարդապետը: Ոմանք ուրացել էին Նրան եւ տանջուում էին մեղաւորութեան զգացումից: Ուրիշները իշխանութեան եւ փառքի մեծ յոյսեր էին կապել Նրա հետ եւ հիմա ապրում էին իրենց յոյսերի կործանման ցաւով: Բայց յարուցեալ Քրիստոս յայտնուեց նրանց, փարատեց վիշտն ու կասկածը, վերականգնեց նրանց ճշմարիտ հաւատի ու յոյսի մէջ, հաստատեց առաքելութեան մէջ, որ աւետեն մարդկանց փրկութեան շնորհը, քարոզեն Աստուծոյ սիրոյ, խաղաղութեան վարդապետութիւնը, երկնային արքայութեան Աւետարանը:

Այսօր մեր Տէրն այլեւս Պիղատոսի առջեւ կանգնած անպաշտպան, մարդկանցից լքուած եւ ուրացուած ամբաստանեալը չէ, ոչ էլ չարչարուած, տանջուած եւ խաչը ուսին Գողգոթա բարձրացող դատապարտեալը: Գերեզմանի մէջ ամփոփուած խաչեալը չէ, այլ յարուցեալը՝ Տէրը արարչութեան եւ յաղթական Փրկիչը մարդկութեան:

«Ո՞ւր է, մահ, քո յաղթութիւնը: Ո՞ւր է, գերեզման, քո խայթոցը» (Կորնթ. ԺԵ 55):

Մահն այլեւս յուսաբեկութիւն չէ, կեանքի աւարտ չէ եւ անէութիւն չէ: Գերեզմանը վախճանը, վերջը չէ այլեւս: Քրիստոսի յարութեամբ «վերջը» խորտակուեց, եւ գերեզմանից այն կողմ ճանապարհն է դէպի յաւիտենութիւն: «Յաւիտենական կեանքը այս է. որ ճանաչեն Քեզ միակ ճշմարիտ Աստուած, նաեւ Յիսուս Քրիստոսին, որ Դու ուղարկեցիր» (Յովհ. ԺԷ 3)– ասում է մեր Փրկիչը՝ Իր եւ մեր Հօրը դիմելով:

Յաւիտենական կեանքի ուղին այս աշխարհում Քրիստոսով յարուցեալ նոր կեանքն է, որը պարգեւում է մարդկանց Քրիստոս աստուածային Իր զօրութեամբ: Վերածնուած հոգու այդ նորոգեալ կեանքը ազատ է չարի իշխանութիւնից: Մեր Տէրը յաղթել է չարին, կործանել է մահը եւ բոլոր մարդկանց ընծայել է վերստին ծնուելու, Աստուծոյ որդեգիրները լինելու շնորհը:

Աստուծոյ ստեղծածն է աշխարհը, ուր ապրում ենք: Ամեն բան Նրա ձեռքի գործերն են: Ինչ որ ունենք, Նրան է պատկանում: Բայց աշխարհի մէջ Ադամի օրից սկսեալ մարդը ոչ քիչ դէպքերում, կամայ թէ ակամայ, գործիք է դառնում չարի ձեռքին եւ քանդում է Աստուծոյ ձեռակերտը, մռայլում է արարչաստեղծ կեանքի ուրախութիւնը: Այսօր էլ մարդկային կեանքում չարութիւնը, անհաւատութիւնը, նիւթապաշտութիւնը, սուտը, ատելութիւնը, իշխանատենչութիւնը մահ են սերմանում եւ մեծ ու փոքր գերեզմաններ փորում: Այսօր էլ մենք ստիպուած ենք ընդունել, որ մարդու կեանքը այնպէս եւ այն չափով արժեւորուած չէ, որքան հրաւէրն է Տիրոջ ու Կամքը Նրա Փրկչական: Խաղաղութեան եւ արդարութեան որոնումներում մարդը բախումների դռներ է բացում, անիրաւութիւն սերմանում, քանզի Տիրոջ պարգեւած հոգու խաղաղութիւնն ու արդարութիւնը չէ, որ փնտրում է, այլ՝ խաղաղութեան ու արդարութեան անուան ներքոյ՝ սեփական ապահովութիւնն ու շահը: Արդարեւ, կորստաբեր են Աստուծոյ Կամքին հակառակ ընթացքները: Տէրն Իր կեանքը տուեց՝ մարդուն կորստից փրկելու համար եւ կոչեց մարդկանց ապրելու հաւատով, սիրով եւ յոյսով: Այս արժէքներով են իրականանում հոգեւոր վերածնունդը եւ բարոյական առաջադիմութիւնը մարդկութեան: Այս ճշմարիտ արժէքներով են կեանքի կոչուում հասարակական կեանքի առաջընթացները, գործում իրաւունքն ու օրէնքը՝ յանուն մարդկանց բարօրութեան:

Աշխարհասփիւռ սիրելի ժողովուրդ հայոց,

Մեր պատմութեան ընթացքում մեզ նոյնպէս յաճախ պարուրել է մահուան շուքը, խոցուել ենք խորը, խաւար օրերում ենք ապրել, բայց լուսատենչ հայեացքով փնտրել ենք երկնաշնորհ արշալոյսները: Չափել ենք չարչարանքի եւ նեղութեան խորութիւնը, բայց վեր ենք յառնել հերոսական խոյանքներով: Այս օրերին էլ փորձութեան մէջ ենք: Խռովուած է Հայրենիքի խաղաղ կեանքը, վտանգուած պետութեան կայունութիւնը, որոշակիօրէն հարուած է հասցուել մեր պետութեան վարկին եւ մեր ժողովրդի բարի անուանը, որոնք մեր մեծագոյն ձեռքբերումներն են: Անհանդուրժողութիւնը, ատելութիւնը, առճակատումը ճանապարհ չեն վերացնելու մեր կեանքի արատաւոր երեւոյթները, վճռելու ազգի առջեւ ծառացած խնդիրները: Դրանք նոր վէրքեր են աւելացնում եւ նոր բարդութիւններ, սպառնալիքներ յաւելում մեր կեանքին: Մենք խնդիր ունենք հոգալու, որ մեր իրականութիւնից վանուեն ամեն չարահնար ու ստայոդ խօսք, արարք ու ընթացք: Հարկ ի վերայ մեր կայ՝ նախանձախնդիր լինել, որպէսզի մեր իրականութեան մէջ ճանապարհ հարթեն ճշմարիտ եղբայրսիրութիւնը, արդարամտութիւնն ու օրինայարգութիւնը, հաւատն ու վստահութիւնը, հաշտութեան եւ խաղաղութեան հոգին: Աննուազ դարձնենք մեր ջանքերը՝ ի սէր մեր պետականութեան ամրութեան, մեր երկրի անընդմէջ առաջընթացի, որպէսզի յաղթահարենք մեր

կեանքը խանգարող դժուարութիւնները, եւ յառնի մեր Հայրենիքը զօրութեամբ, որը յոյսն է մեր ժողովրդի միացեալ կեանքի եւ յարատեւութեան:

Այսօր Մեր յորդորն է բոլորին՝ հոգեւորական եւ աշխարհական դասին, մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի յարութեան հաւատով սէրը, բարին ու բարիքը առատացնել մեր կեանքում, բուժել վիրավոր սրտերը, հեռացնել ամենայն չարը մեր սրտերից, հոգիներից եւ Հայրենիքի սահմաններից, լինել մի հօտ եւ մի հովիւ: Հայր Աստուծոյ Սուրբ Աջի պահպանութեան ներքոյ, Յարուցեալ մեր Փրկչի Սուրբ Խաչի նշանով եւ Սուրբ Հոգու շնորհաբաշխ առաջնորդութեամբ կերտենք այն ապագան, որը բոլորս ենք երազում՝ հզօր, անսասան Հայոց պետութիւն, աստուածասէր, հայրենասէր, երջանիկ հայ ժողովուրդ: Մեր Հայրենիքի ու ժողովրդի համար հոգալով՝ գանձեր պիտի կուտակենք նաեւ այն առաւել՝ յաւիտենական կեանքի համար, որը Սուրբ Յարութեան տօնը մեզ աւետում է:

«Արդ՝ ինչպէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ Տիրոջը, այնպէս էլ ընթացէք Նրանով՝ արմատաւորուած եւ կառուցուած Նրա վրայ, հաստատ մնալով հաւատի մէջ, ինչպէս որ ուսանեցիք, որպէսզի աճէք Նրա մէջ գոհութեամբ» (Կող. Բ 6-7):

Մեր Տիրոջ հրաշափառ Յարութեան աւետիսով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Լուսաւորչի Սուրբ Գահից ի Քրիստոս եղբայրական սիրով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Քոյր Եկեղեցիների շնորհազարդ հոգեւոր Պետերին: Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասաւորներին եւ հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի:

Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Ռոբերտ Քոչարեանին, Հայաստանի Հանրապետութեան ընտրեալ նախագահ, վարչապետ տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն եւ Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Աղօթում ենք, որ երկնային խաղաղութիւնը հաստատուի մեր Հայրենիքում, համայն աշխարհում, բոլոր մարդկանց հոգիներում:

Թող կենսատուն եւ կեանքի առաջնորդը՝ Տէրը մեր Յիսուս Քրիստոս Իր յարութեան լոյսով օրհնի մեր կեանքը եւ լուսաւորի ուղին ազգիս հայոց:

Շնորհք, սէր, հաւատ, յոյս եւ զօրութիւն մեր ողջ ժողովրդին եւ համայն աշխարհին. Ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի